ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 3-17 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU:E/2022.13.1.003

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՎԱԽԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հոդվածում առաջադրվել է այն միտքը, որ հայության մեջ տևական ժամանակ տարբեր, հատկապես կեցության անբարենպաստ պայմանների անփոփոխության պատճառներով շեշտը դրվել է ոչ թե կառուցարկված ազգային ինքնության նորացման ու հարստացման, այլ գլխավորապես պահպանման վրա: Նման դիրքորոշման հիմքում ընկած են ինքնութենական տարրերը կորցնելու վախերը, որոնց հակազդման ակտիվ ձևերից են զինված պայքարն ու ազատամարտը, համաշխարհային ու տարածաշրջանային շարժումներին մասնակցելը, իսկ կրավորական ձևերից են ավանդապահությունը, գաղտնապահությունը, առանձնացում-մեկուսացումը և հեռացումը: Հոդվածում դիտարկվում են հակազդման կրավորական ձևերը, որոնց հիմքում ընկած է այն դիրքորոշումը, որ ո՛չ մի դեպքում և ո՛չ մի պայմանով չպետք է հրաժարվել ավանդվածից ու ազգային ինքնության հիմնասյուներից՝ հայրենիքից, ազգից, կրոնից ու դավանանքից, պատմական անցյալից և այլն: Կրավորական ձևերը ազգային ինքնության պահպանման հուսալի մեխանիզմներ էին հատկապես միջնադարում, երբ համատարած գերակշռում էր ավանդական մտածելակերպը, և ազգությունը նույնացվում էր կրոնի և դավանանքի հետ: Սակայն տևական ժամանակ ինքնությունը միայն դրանցով պահպանելու ռազմավարությունը դրականի հետ ունեցել է (և ունի) իր բացասական հետևանքները: **Նախ**, ավանդապաշտությունը, հատկապես դրա արմատական թևը մերժում է նորամուծությունները, որոնք էլ խոչընդոտում են ինքնության հարստացումն ու արդիականացումը: **Երկրորդ**, առանձնացման դիրքորոշումը ենթադրում է մտածելակերպի ու գործելակերպի փոփոխություն, սեփական կյանքի կազմակերպման հիմքերի ու սկզբունքների՝ հզորանալու քաղաքական տեսլականի, ազգային կրթության ու դաստիարակության համակարգի, մշակութային արժեքների պահպանման ձևերի մշակում: Սակայն ինքնատարբերակվելով ու առանձնանալով արտաքին աշխարհից՝ հայերը հաճախ առաջնորդվել են առավելապես զոյատևման կենսափիլիսոփայությամբ և տարբերակվելու նախնական քայլերից այն կողմ չեն անցել, չեն մշակել առանձնացվածի ամբողջական կենսափիլիսոփայություն ու գաղափարախոսություն: Իսկ զարգանալու ու հզորանալու և ժամանակի ոգուն համահունչ գործելու ստուգված ճանապարհը ավանդույթի վերաարժևորման, ավանդականի և նորարարականի, սեփականի և օտարի խելամիտ ու ինքնատիպ համադրումն է, ավանդականի վրա հիմնված ինքնության քաղաքակրթական նոր շերտի կառուցումը:

Բանալի բառեր - *ազգային ինքնություն, վախ, պահպանողականություն, ավանդապահություն, ինքնամեկուսացում, գաղտնապահություն, պատմական հիշողություն, ինքնությունը միջնադարում, ինքնության քաղաքականություն*

Ուղղափառների մեջ ուղղափառ չենք, հեթանոսների մեջ հեթանոս չենք:
Եվ պահպանեցինք հստակ Ես-ը: Մենք հասկացանք, որ պիտի ունենանք սեփական Ես-ը, մեր ժողովուրդը, չի կարելի ձուլվել: Թեպետ այդ պատճառով շատ ենք տառապել:

Հ. Մաթևոսյան

Յուրաքանչյուր ազգ իր պատմության ընթացքում մշակում է ազգային ինքնությունը պահպանելու, ամբողջացնելու և արդիականացնելու քաղաքականություն, որը ենթադրում է ինչպես ինքնանույնականացման ավանդական ձևերի ու ինքնապաշտպանական մեխանիզմների, մտածելակերպի ու գործելակերպի յուրահատկությունների, ազգային ավանդույթների ու ծեսերի, սոցիոմշակութային տարածության խորհրդանշումների պահպանում, այնպես էլ ինքնության հարացույցի վերափոխում՝ դրա բաղադրատարրերի նորացման ու հարստացման կամ վերաիմաստավորման ճանապարհով: Հենվելով հայոց պատմության ու մշակույթի (առասպել, էպոս, պատմագրություն, գեղարվեստական գրականություն, փիլիսոփայություն և այլն) և ինքնության կառուցարկումների ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարելի է առաջադրել այն վարկածը, որ մեզանում տևական ժամանակ տարբեր, **հատկապես կեցության անբարենպաստ պայմանների անփոփոխության պատճառներով շեշտը դրվել է ոչ թե կառուցարկված ազգային ինքնության արդիականացման ու հարստացման, այլ գլխավորապես պահպանման վրա**: Իսկ ավանդվածը կամ ավանդական դարձածը, այսինքն՝ ազգայինը չկորցնելու պահպանողական դիրքորոշման հիմքում ընկած են ինքնութենական տարրերը կորցնելու բնազդական (ֆիզիկական ու կենսաբանական) ու հոգևոր (բնազանցական ու հոգեբանական) վախերը:

Առհասարակ վախը հուզական վիճակ է, որն արտացոլում է մարդու կենսաբանական ու սոցիալական հետպատասխանը (հակադարձումը) իր առողջության, բարեկեցության ու կենսական արժեքների համար իրական ու թվացյալ կորստի ապրումների ժամանակ: Վախը բնականաբար առաջացնում է տագնապի, հուսահատության, անվստահության, խուճապի և այլ հոգեբանական վիճակներ: **Սակայն չպետք է վախենալ վախերից**: Կենսաբանական տեսակետից վախը օգտակար է օրգանիզմի համար, իսկ սոցիալականի առումով այն ունի թե՛ դրական, թե՛ բացասական գործառույթներ և էական ազդեցություն է թողնում սոցիալական-ազգային կյանքի կազմակերպման մշակույթի վրա: Վախի գործառույթն է զգուշացնել սպասվելիք վտանգի մասին, համախմբել անհատի կամ ազգի ուժերը, հնարավորություն տալ ուշադրությունը սևեռելու վտանգի աղբյուրի վրա, վերաիմաստավորել տեղի ունեցածը և ուղիներ փնտրել խուսափելու դեպքերի զարգացման անցանկալի հե-

տևանքներից և այլն։ Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ վախի դեպքում (հատկապես եթե չեն վերանում վախը ծնող պայմանները) նեղանում ու սահմանափակվում է գործելու սոցիոմշակութային տարածությունը, իսկ մտածողությունը դառնում է միակողմանի, սահմանափակ, երբեմն էլ՝ ագրեսիվ պահպանողական, այլախոհությունն ու բազմակարծությունը մերժող, իսկ վարքաձևը՝ միակերպ, կաշկանդված ու կանխատեսելի, ինչի պատճառով հնարավոր չի լինում ոչ միայն իրավիճակի մասին ունենալ ամբողջական ու անաչառ պատկերացում, այլև ընտրություն կատարել կամ մտածել իրավիճակից դուրս գալու այլընտրանքային ելքերի մասին։

Ազգային ինքնության կորստի տագնապն առաջանում է այն ժամանակ, երբ ազգը հայտնվում է ֆիզիկական ոչնչացման ու ուծացման, հայրենիքի ու պետականության, ինքնիշխանության կամ անկախության, ազգային մշակութակերպի՝ լեզվի, կրոնի, դավանանքի, ավանդույթների և կենսակերպի գոյությունը վտանգող իրավիճակներում։ Բնականաբար, ինքնության կորստի վախերն առավելապես ներհատուկ են փոքրաթիվ այն ազգերին, որոնք հանգամանքների բերումով անընդհատ գտնվել են լինել-չլինելու սահմանային իրավիճակում և ուծացման կամ ոչնչացման սպառնալիքի պայմաններում հարկադրված էին լրացուցիչ ճիգեր գործադրել՝ սեփական դիմագիծը պահպանելու համար։ Այդ վտանգավոր իրավիճակները փոխնիփոխ կամ միաժամանակ մշտապես ուղեկցել են հայությանը՝ նրա պատմությունը դարձնելով մաքառումների, ընդվզումների, ինքնապաշտպանական գոյամարտերի, առասպելական ու «իռացիոնալ» («բարոյական») հաղթանակների, հալածանքների ու փախուստների, ջարդերի, արտագաղթերի ու տարածքային կորուստների, ինքնությունն ուրացածների ու պահպանածների պատմություն։ Սովորաբար նման վախերի հակազդման կամ հաղթահարման գործուն ձևերից են զինված ինքնապաշտպանությունը, ազատամարտը, գաղափարական պայքարը, ստեղծված իրավիճակից դուրս գալու «հեղափոխական» ջանքերը, իսկ կրավորական ձևերից են՝ ավանդապահությունը, գաղտնապահությունը, առանձնացումն ու ինքնամեկուսացումը կամ փախուստն ստեղծված իրավիճակից, որի դրսևորումներից են հեռացումը, արտագաղթը (հայրենալքումը), ուծացումը և այլն (ի դեպ, հակազդման ձևերի բաժանումը պայմանական ու հարաբերական է)։

Հայոց մեջ ֆիզիկական ու հոգևոր առումներով ինքնությունը պահպանելու ձգտումը դրսևորվել է թե՛ գործուն և թե՛ կրավորական ձևերով, սակայն առավելապես գերիշխել են ավանդապաշտության, գաղտնապահության, առանձնացման ու մեկուսացման, ընդհանուրից (օտարներից) տարբերվելու, փախուստի ու հայրենալքման կրավորական ձևերը (ստորև կանդրադառնանք հենց այդ ձևերից մի քանիսին)[1]։

[1] Մեկուսանալու ու առանձնանալու դիրքորոշմանը զուգահեռ՝ հայերին բնորոշ է նաև համաշխարհային ու տարածաշրջանային գործընթացներին մասնակցելու, նորա-

Ավանդական դիրքորոշումների, գաղտնապահության, հեռացման, մեկուսացման ու առանձնացման դեպքերն արտացոլված են թե՛ հայոց առասպելներում, թե՛ հայկական էպոսում, թե՛ պատմական կյանքում և թե՛ տեսական մտքում:

Ինքնության կորստի վախի հակազդման ձևերից են ազգայինի բռվանդակությունը կազմող՝ հայրենիքի (բնաշխարհի), մշակութային ու կրոնական ժառանգության, կենսական արժեքների **ընդգծված պաշտպանությունն ու պահպանությունը**, այսինքն՝ ավանդապահությունն ու պահպանողականությունը: Ավանդապահն առավելապես մտածում է ինքնության տարրերը պահպանելու և ոչ թե զարգացնելու՝ նորացնելու, փոփոխելու մասին, այսինքն՝ պահպանողական է, զգուշավոր, կասկածամիտ և անհանդուրժող նորամուծությունների նկատմամբ: Բնազանցական ու հոգեբանական տագնապը գործողության մեջ է դնում ինքնության համախմբման գործառույթը և «ստիպում» է ազգային ինքնությունը կառուցարկել «Մենք»-ի և «Նրանք»-ի ընդգծված հակադրության ձևաչափով, որում «Մենք»-ի մեջ մտնում են յուրայինները՝ արմատական ավանդապաշտների գլխավորությամբ, իսկ «Նրանք»-ի մեջ՝ օտարները, սեփական ավանդամերժողները, ավանդույթը ձևափոխողները և օտար ավանդույթներ ներմուծողները: Փաստորեն համախմբման գործընթացը և ավանդույթի նկատմամբ վերաբերմունքը ոչ միայն միավորում, այլև բաժանում են ազգը, ընդ որում այդ բաժանումը, որպես կանոն, ավանդախախտներին վերածում է այլախոհների, դավաճանների ու թշնամիների, որոնք հալածվում են, վերածվում արհամարհված եզրաբնակների, ստիպված հեռանում հայրենիքից կամ հավատափոխ ու դավանափոխ լինելով՝ ձուլվում «Նրանք»-ի հետ: Ավանդական հասարակության մեջ ձևավորվում են ավանդույթները պահող հաստատություններ և խավեր (օրինակ՝ միջնադարում եկեղեցին և հոգևորականությունն էին), որոնք ապահովում են ավանդույթի հերմենևտիկական (իրականության մեկնաբանության համակարգը, աշխարհիմացության եղանակը), նորմատիվ, օրինականացման և նույ-

---

բական ու առաջադիմական գաղափարներով տարվելու և հեղափոխական տարատեսակ շարժումների հարելու վարքագիծը: Դժբախտաբար, հայերի այդ վարքագիծը դրսևորվել է (և դա շարունակվում է) առավելապես օտար երկրներում և օտար ազգերի շրջանակներում: Հայերը քաղաքակրթության տարբեր փուլերում նշանակալից (առաջադիմական) դեր են խաղացել այն երկրներում, որտեղ բնակվել են և իրենց ավանդն են թողել այդ երկրների ռազմական, պետական, քաղաքական, մշակութային կյանքի զարգացման գործում: Այլ խոսքով՝ հայերի հեղափոխական եռանդից, զինական ուժից ու պատերազմելու տաղանդից, կառավարչական հմտություններից ու ստեղծագործելու կարողականություններից ավելի շուտ օգտվել են այլազգիները, քան իրենք՝ հայերը: Այս առումով իրավացի է Ստ. Նազարյանցը, երբ գրում էր. «Ո՛չ ոք կարող չէ ուրանալ Հայերի քաջութիւնը և արիական գործերը պատերազմի մէջ, բայց ցաւելի է ասել, որ այդ առաքինական յատկութիւնքն աւելի օգտել են օտարներին, քան թէ ինքեանց…: Այս է ահա պատճառը, որ Հայոց ազգը արդարև եղած է մի քաջ ազգ, բայց համարեա թէ նոյնպէս միշտ թոյլ, օտար իշխանութեան ստրուկ և հնազանդ ազգ…» **(Ստ. Նազարեանց,** Հայերի կոչումը մարդկութեան մէջ, «Հիւսիսափայլ», 1859, թիվ 1, էջ 4):

նականացման կողմերը։ Անհատի նույնականացումն իր ազգի հետ տեղի է ունենում առաջին հերթին ավանդական արժեքների՝ ծեսերի, սովորույթների, վարքատիպերի յուրացման ու վերապրման միջոցով, և այս իմաստով դրանք հանդես են գալիս որպես անհատի սոցիոմշակութային նույնականացման և նրա ներաշխարհի ամբողջականությունը ապահովող միջոցներ։

Պատմական հանգամանքների բերմամբ հայության մեջ գերիշխել է ավանդապաշտական ու պահպանողական մտածելակերպն ու վարքագիծը, որոնք պետականազրկության շրջաններում (հատկապես միջնադարում) կատարել են դրական (ինքնապաշտպանական) գործառույթ, հնարավորություն տվել հստակորեն տեսնելու սեփական և ուրիշների ինքնության միջև առկա սահմանագծերը։ Ավանդույթն ստեղծվում է իրականության մեկնաբանության անփոփոխ ձևերի, վարքի կարգավորման կանոնների և նույնականացումների վեհացման ու սրբացման հիմքի վրա։ Օրինակ՝ V դարում զրադաշտական պարսիկների դեմ պայքարում հայերը ոչ միայն իրենց նույնացնում էին քրիստոնեության հետ, այլև ընդգծված դրական վերաբերմունք ցուցաբերում այդ նույնականության նկատմամբ, այսինքն՝ հանուն հավատքի հոգեբանորեն պատրաստ էին դիմելու ծայրահեղ քայլերի՝ ընդհուպ զանգվածային զոհաբերություն։ Սա նշանակում է, որ հավատքի և ինքնության միջև այլևս հաստատվել է բացարձակ նույնականություն, հետևաբար պայքար վասն հավատի պայքար է ինքնության պահպանման համար։ Քանի որ միջնադարում ազգային ինքնության գլխավոր պահապանը դառնում է եկեղեցին՝ իր դավանաբանությամբ, կարգերով, ծեսերով ու արարողություններով, և ազգությունը միանշանակ նույնացվում էր կրոնի և դավանանքի հետ, ուստի միջկրոնական ու ներքրիստոնեական դավանաբանական հակամարտությունների ծավալման պայմաններում էլ ավելի էր կարևորվում կրոնական խորհրդանշաններով ինքնության սահմանների զատորոշման ու պահպանման խնդիրը[2]։ Հայոց տեսական-աստվածաբանական մտքում առա-

[2] Հայոց եկեղեցին միջնադարում, հատկապես պետականազուրկ ժամանակներում ազգային կյանքի կազմակերպիչն ու կարգավորողներ, և այդպես էր մինչև XIX դարի վերջերը։ Այս հանգամանքն էլ հիմք է հանդիսացել, որ մի կողմից հետագայում պահպանողականները՝ ազգային ինքնությունը նույնացնեն կրոնական ինքնության հետ, իսկ մյուս կողմից՝ ընդգծեն հայոց կյանքում եկեղեցու խաղացած առանձնահատուկ դերը. «Ազգային եկեղեցին հայոց ազգի ամենաթշուառ ժամանակներում, պատմական ամենածանր պարագաներում պահպանել է ազգային ամբողջականութիւնը, անհատականութիւնը, ազգային բարքն ու վարքը, մայրենի թանկագին բարբառը, ընտանիքը, արիւնի պարզությունը, տիպը, միով բանիւ այն ամենը, որով մի ազգութիւն ջոկվում է միւսից։ Հէնց որ հայը թողել, հեռացել է իւր ազգային եկեղեցու գրկից, նա օտարացել է և իւր ազգութիւնից» (**Ս. Սպանդարեան,** Կաթուղիկոսական խնդրի առթիվ, «Մեղու Հայաստանի», 1883, մարտի 11, թիվ 25)։ Սակայն XIX դարում, երբ հայ լուսավորականների ջանքերով կառուցարկվում է ազգային ինքնության աշխարհիկ հարացույցը, որում կարևոր տեղ է տրվում ազգի, հայրենիքի, խղճի ու դավանանքի ազատության գաղափարներին, կրոնի ու դավանանքի նույնացումը ազգության հետ դիտ-

ջադրվում և հիմնավորվում է այն տեսակետը, որ ոչ թե տարածքը, լեզուն, արյունակցական կապը, այլ հավատքն ու եկեղեցական ավանդույթն են ազգի միաբանության ու համախմբության հիմքը[3]: Այսպիսի պայմաններում ավանդույթը վերածվում է ինքնության պահպանման վճռական գործիքի, ավելի ստույգ՝ ավանդույթը ներկայանում է որպես ինքնության կարևորագույն ցուցիչ: Ժամանակի ընթացքում ավանդույթը ինքնանում էր, իսկ ինքնության հարացույցային տարրերը և նույնականացման ձևերը՝ ավանդականացվում:

Ավանդույթը կորցնելու վախը կատարում է թե՛ ավանդույթի սրբացման և թե՛ ազգային ուժերի համախմբման գործառույթներ: Միջնադարի տարբեր փուլերում ծավալված միարարական շարժումների կամ միջեկեղեցական պայքարի ժամանակ հայ ավանդապաշտները վճռական էին տրամադրված ավանդամերժության և եկեղեցիների միավորման ցանկացած փորձերի ու ձգտումների դեմ: Նման դեպքերում հայ ավանդապահները հաճախ ընկնում էին ծայրահեղության մեջ՝ վախենալով, որ ինքնության ավանդական որևէ տարր չպահպանելը կարող է հանգեցնել ինքնության կորստի, որ առանց այդ տարրի կամ դեպքերի զարգացման այլ տարբերակի պարագայում անխուսափելիորեն կձուլվենք ուրիշներին: Այդ պատճառով մեզանում ավանդամերժությունն առաջին հերթին գնահատվել է բարոյական խստագույն չափանիշների դիրքերից: Օրինակ՝ Գրիգոր Տաթևացին «հայրենի օրենքներից» հրաժարվողներին, կրոնափոխներին ու դավանափոխներին համարում է «շնացողներ». «Նոյնպէս որք թողուն զհայրենի օրէնս սուրբս և զուղղափառ դավանութիւնս, և մտանեն յայլ ինչ աղանդս, մահմետականաց կամ քաղկեդոնականս, շնացօղ կոչին»[4]: Իսկ այդ հրաժարվողները, որպես կանոն, «մոռանում» կամ անտեսում էին սեփական ավանդույթները, թերագնահատում և վատաբանում ազգային արժեքները: Սովորաբար, հայազգի ավանդամերժներն իրենց հերթին ծայրահեղական էին, անհանդուրժող և անզիջող (սա սեփական ուրացումը արդարացնելու հոգեբանական մեխանիզմ է), այսինքն՝ այլազգի «քննադատների» համեմատությամբ ավելի նսեմացուցիչ խոսքերով էին բնութագրում հայերին, կատարյալ սխալ համարում հայոց եկեղեցու դավանաբանությունը, իսկ հայ հոգևորականներին բնութագրում որպես առաքինություններից ու գիտելիքներից զուրկ տգետներ[5]:

Ավանդապահները սովորաբար ուռճացնում են ավանդամերժութ-

վում է որպես ազգապառակտիչ դատապարտելի մոտեցում: Հետագայում Խորհրդային Հայաստանում կրոնահալած ու աստվածամերժ գաղափարախոսության գերիշխանության պայմաններում փորձ արվեց խորհրդահայ մարդու ինքնությունից բացառել կրոնական ինքնության տարրերը, սակայն կյանքը ցույց տվեց, որ դա անիմաստ ձեռնարկ է, և որ առանց կրոնական ինքնութենական ավանդույթների անհնար է պատկերացնել հայոց ինքնության մշակութային ու քաղաքակրթական շերտերը:

[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 552:

[4] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 558:

[5] Տե՛ս, օրինակ, **Լ. Ս. Խաչիկյան**, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 11, 1973, էջ 151:

յան ու ավանդափոփոխության վտանգները։ Առհասարակ, արմատական ավանդապաշտությունն ինքնության կորստի վախի չափազանցված դրսևորումն է։ Այդպիսի դիրքորոշման համար գոյություն ունի միայն մեկ անփոփոխ ու օրինական նույնականացում, մնացյալ նույնականացումները համարվում են հակազգային կամ ապազգային, հետևաբար՝ անընդունելի ու անօրինական, արժանի բանադրանքի ու հալածանքի։ Ավանդական հասարակությունում հասկանալի պատճառներով ինչպես մեզանում, այնպես էլ այլուր ավանդամերժներին ու այլախոհներին չեն հանդուրժել, հալածել են, վտարել համայնքից, համարել օտար ու թշնամի տարրեր։ Այսօր էլ դեռ ըստ սովորության ականատես ենք լինում նման անհանդուրժողականության դրսևորումների։ Մենք չենք ընդունում այն փաստը, որ մենք իրարից տարբեր ենք, որ իրավունք ունենք լինելու տարբեր, և որ այդ տարբերության հանգամանքը չպետք է խանգարի միասին գործելու։ Պատմական փորձը ցույց է տալիս, որ մեր թուլացման պատճառներից մեկը մեր՝ «ուրիշից» հրաժարվելը և այդ «ուրիշին» թշնամու գիրկն ուղարկելն է։ Մինչդեռ մենք **մեր «ուրիշին» չպետք է հանձնենք «ուրիշներին», մեր «ուրիշին» չպետք է դարձնենք մեզ թշնամի, այլ ընդլայնելով ազգայինի ըմբռնման սահմանները, կարևորելով տարբերությունների դերը ազգային միասնության հաստատման գործում՝ պետք է նրանց հետ երկխոսելով, «լեզու գտնելով» ու համագործակցելով միասնաբար լուծենք ազգի առջև ծառացած խնդիրները**։

Սովորաբար ավանդապահությունը հայոց մեջ զուգակցվում է **գաղտնապահության** հետ։ Երբեմն մեզանում ազգային արժեքներն այնպես են թաքցվում, որ նույնիսկ ոչ միայն ժամանակակիցները, այլև հետագա սերունդները այդ մասին չեն իմանում կամ չեն կարողանում դրանք ըստ էության վերծանել և կիրառել։ Թեև որոշ արժեքներ թաքցնելը, ինչ-որ իմաստով շրջանառությունից հանելն ուղղված են օտարի կործանարար միջամտությունից զերծ պահելուն, այնուհանդերձ դա ավանդապահության ծայրահեղ դրսևորումներից է։ Ինչ-որ արժեքավոր բան կորցնելու վախը ստիպում է այն թաքցնել, մինչև կանցնի վտանգը, մինչդեռ վտանգը շուտ չի անցնում, և թաքցրածը աստիճանաբար մոռացվում է, հատկապես եթե գրեթե ոչինչ չի արվում վերհիշելու ուղղությամբ։ Օրինակ՝ «Սասնա ծռեր» հայկական էպոսում[6] թերևս բոլորը առանձին-առանձին իրենց հոգու խորքերում ունեն ազգի պատմության մասին հիշողություններ, սակայն գոյություն չունեն հիշողությունը պահպանելու հաստատություններ, հիշողությունը ներկայի մեջ գործադրելու, ներկան հիշողությամբ զորացնելու մեխանիզմներ ու եղանակներ։ Իսկ առանց հիշողության ու առանց կամային ճի-

[6] Ի հաստատումն վերն ասվածի՝ նշենք, որ եթե բազում ազգերի դյուցազնավեպերը գրի են առնվել դեռևս միջնադարում, ապա հայկական էպոսի պատումներից մեկը առաջին անգամ Գարեգին Սրվանձտյանը գրի է առել և հրատարակել 1873 թ.։

գերի ապրել նշանակում է պարզապես զոյատևել, անհոգ ու անտարբեր լինել այն արժեքների հանդեպ, որոնք փրկելու համար մեր նախնիները կառուցել էին ուրիշներից սահմանազատվելու ինքնության խորհրդանշական Պարիսպները[7]: Հայկական էպոսում դյուցազունները մեծանում են առանց պատկերացում ու գիտելիք ունենալու իրենց ազգային ու ընտանեկան արժեքների, իրենց սրբատեղիների ու իրենց նախնիների հերոսական գործերի մասին: Անցյալը բացակայում է ներկայի մեջ, որովհետև անցյալը չի վերհիշվում: Սասունցի Դավիթը տեղյակ չէ իր հոր գերեզմանի, որսասարի, այսինքն՝ Ծովասարի, կառուցած արգելոցի ու եկեղեցու, զենք ու զրահի, Թուր Կեծակիի ու Քուռկիկ Ջալալիի մասին, որովհետև հարազատները նրան ցույց չեն տվել, չեն պատմել ու դրանցով նրան չեն դաստիարակել: Դավիթը պատահականորեն է իմանում իր հոր որսատեղի ու գերեզմանատեղի մասին: Եզրաբնակ Պառավը, որը ցեղային հիշողության մոռացված ու մեկուսացված պահապանն է, տեսնելով, որ Դավիթը ոչնչացնում է իր կորեկի արտը, նախատում է նրան՝ նախ ասելով, թե «գնա, հորդ նետ-աղեղը գտիր», այնուհետև՝ «եթե տղամարդ ես, ապա գնա հորդ պատկանող որսասարում որս արա»: Անակնկալի եկած Դավթի խնդրանքին՝ ցույց տալ որսասարի տեղը, Պառավն ասում է. «Դավիթ, գնա քո հրողբոր օձիք բռնի. // Քեզ կը տանի, նշա՛նց կը տա»[8]: Խորհրդանշական է, որ թե՛ հորեղբոր կինը և թե՛ հորեղբայրն սկզբում հրաժարվում են կատարել Դավթի խնդրանքը (հետաքրքիր է հորեղբայր Հովանի անմիջական արձագանքը՝ «**Սովորեցնողիդ բերան կոտրի**»), բայց համառ սպառնալիքներից հետո համաձայնվում են: Պարզվում է, որ նրանք, ովքեր գիտեն թաքցվածի մասին, այդ գիտելիքը չեն փոխանցում գոնե նրանց, ո-

[7] Հիշենք, թե ինչ ոգևորությամբ են Սանասարն ու Բաղդասարը կառուցում իրենց նոր երկրի՝ Սասունի պարիսպները, սակայն նրանց սերունդները այլևս չեն խոսում դրանց մասին, համենայն դեպս դրանք չեն դառնում ո՛չ սրբավայր, ո՛չ աղոթատեղի և ոչ էլ փառավոր անցյալը հիշեցնող խորհրդանշաններ: Համեմատության համար նշենք, որ Երուսաղեմի նշանավոր «Արցունքի պատը» (Դավթի և Սողոմոնի կառուցած Տաճարի պահպանված հատվածը) ամբողջ աշխարհի հրեաների համար սրբավայր ու ուխտավայր է, հրեաների փառավոր անցյալի խորհրդանշանը, Աստծու հետ զրուցելու և հանդիպելու վայրը, աղոթատեղին և հրեաների անցյալն ու ներկան շաղկապող միստիկական կամուրջը: Այդ պատը հրեաների համար ոչ թե պատնեշ է, իրար մեկուսացնող ու բաժանող կառույց, այլ իրենց տարբերությունները միառժամանակ համահարթեցնող, ընդհանուր հիշողությունը վերականգնող, ազգի առջև պատասխանատվության զգացում բորբոքող, տարաբնույթ վտանգավոր մարտահրավերներին միասնական ուժերով դիմակայելու խորհրդանշան: Հայերը նույնպես կառուցել են տարբեր տիպի Պատեր ու Պարիսպներ, Տաճարներ ու Եկեղեցիներ, որոնցից մի քանիսը դարձել են ուխտատեղի, բայց չեն վերածվել համազգային հավաքատեղիի: Ավելին, դրանց մեծ մասը ժամանակի ընթացքում խոնարհվել է, վերածվել կիսաքանդ կառույցների, որոնք անուղղակիորեն խորհրդանշում են ազգային արժեքների նկատմամբ մեր անտարբեր վերաբերմունքը: Մոռացության հետևանքով «անխորհուրդ» Պարիսպները ժամանակի ընթացքում դառնում են «Թղթե Պարիսպներ», որոնք կարող են փլվել ոչ միայն քամուց, այլև մի պատահական զեփյուռից:

[8] **Սասունցի Դավիթ,** Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1989, էջ 270:

ռոնց համար դա նախատեսված է: Էպոսում ազգային արժեքները թաքցնելու խորհուրդն այն է, որ դրանք պահպանվեն աղավաղումներից ու կործանումից, որ դրանք անաղարտ փոխանցվեն գալիք սերունդներին: Բայց գաղտնապահությունն էլ պետք է ունենա իր սահմանները: Օրինակ՝ արձակագիր Լ. Խեչոյանը Փոքր Միհրի «փախուստը» և Ագռավաքարում փակվել-մեկուսանալը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Գուցե Միհրն էլ զգացել էր կործանարար, իրար հաջորդող չարագույժ աղետների, խոշոր խառնակությունների, տեսակը բնաջնջող սև պատերազմների, որդեսերման սերմը փչացնող պտղաորդի մոտենալու ժամանակը: Գուցե հենց այդ պատճառով էր հրաժարվել իշխանական Մեծ տան գահից, երկրի առաջնորդը լինելու բոլոր իրավունքներից, անսպառ հարստությունից: Ժողովրդի դարերով կերտած մշակույթը իր մեջ ներառած՝ գնացել, հազար ինը հարյուր տարի. երկու հազար տարի փակվել էր Ագռավաքարի նախամայր արգանդում, նյութական աշխարհից ամենայն ազգային վաստակած ունեցվածքը տեղափոխել էր հոգևոր ոլորտ՝ փորձելով իր հետ պահպանության տարած ժառանգությունը քսան դար հետո ապագա սերունդներին վերադարձնելով՝ փրկել մեր ինքնությունը»[9]: Անշուշտ, Ագռավաքարում փակվելն ունի նաև այդ մետաֆիզիկական-փրկաբանական խորհուրդը, բայց եթե նման մտածելակերպով առասպելական-էպիկական միջավայրից տեղափոխվում ենք իրական աշխարհ, ապա ականատես ենք լինում տխուր տեսարանների՝ ողբալի հետևանքներով: Փաստորեն Փոքր Միհրը փակվում է Ագռավաքարում՝ ազգի կենսունակ ուժը և ազգի ստեղծած հոգևոր ժառանգությունը փրկելու համար, սակայն առկախ է մնում այն հարցը, թե «անտեր», «անգլուխ», «անպաշտպան» ու «անհամբեր ու նյութապաշտ» հայ ազգը անիշխանության կամ չարի իշխանության, պատերազմական թոհուբոհի, հրանոթային համազարկերի պարագայում ինչպե՞ս պիտի գոյատևի մինչև այն ժամանակ, երբ ցորենը կդառնա մասուրի, իսկ գարին՝ ընկույզի չափ: Կկարողանա՞ պաշտպանվել թշնամու հարձակումներից ու հալածանքներից, թե՞ չի դիմանա, կբնաջնջվի,՞ թե՞ կհեռանա հայրենիքից: Եվ եթե քարանձավից իր հերթական դուրս գալու ժամանակ Փոքր Միհրը տեսնի, որ իր բնօրրանում այլևս չկա հայություն, ապա ո՞ւմ պիտի հանձնի այդ մշակութային ժառանգությունը, ինչպե՞ս պիտի արդարացնի իր մեկուսացումը: Նմանապես նրանք, ովքեր այսօր պատերազմական իրավիճակում գտնվող Հայաստանից հեռանում են (թերևս ընդմիշտ կամ մինչև այն ժամանակ, երբ Հայաստանը կվերածվի «չքնաղ դրախտավայրի»), փաստորեն իրենց հետ տանում են նաև հայոց զինվորին, հայոց տեսակն ու մշակութակերպը զարգացնող ուժին ու մտքին՝ չմտածելով, որ դրանով իսկ թուլացնում են երկրի պաշտպանողականությունը և

[9] **Լ. Խեչոյան**, Միհրի դռան գիրքը, Եր., 2013, էջ 16-17:

վտանգի տակ դնում հայրենիքում ապրողների ֆիզիկական գոյությունը: Առհասարակ, միայն «հոգևոր Հայաստանի» մասին մտահոգվող, «վիրտուալ ու էլեկտրոնային» Հայաստանով մխիթարվող հայերը կամ պարտադրված դաժան մրցակցության պայմաններում միայն մշակույթով հաղթելու դիրքորոշման կողմնակիցներն անտեսում են այն հանգամանքը, որ առանց ազգի ֆիզիկական գոյության, առանց «նյութական» Հայաստանի, առանց հայրենի բնաշխարհի հնարավոր չէ պահպանել ու վերաստեղծել ազգային ինքնությունը: Այլ խոսքով՝ հեռացումներն ու փախուստները որքան էլ առասպելական-էպիկական իրականության մեջ ունենան խորհրդապաշտական ու բնազանցական շերտեր, իրական կյանքում ստեղծում են ողբերգական այնպիսի իրավիճակներ, որոնք սպառնում են ազգի ֆիզիկական գոյությանը:

Ավանդապահությունն ու գաղտնապահությունը **ինքնամեկուսացման** նախադրյալներ են ստեղծում: Սեփական դիմագիծը պահպանելու համար նախընտրվում է հնարավորինս հեռու մնալ այլոց՝ «ոչյուրայիններ» հետ շփումներից: Ինքնամեկուսացման վարքագիծը պահանջում է հիմնավորումներ ու արդարացումներ: Պատահական չէ, որ ժամանակ առ ժամանակ հայ մտածողները փորձել են տեսականորեն հիմնավորել հայոց ինքնամեկուսացման, առանձնացման ու իրենց ինքնաբավության (եկեղեցու ինքնուրույնության) դիրքորոշումը: Օրինակ՝ միջնադարյան նշանավոր մտածող Պողոս Տարոնացին (†1123 թ.) հունական ուղղափառ եկեղեցու վարդապետի հետ բանավեճում մատնացույց է անում փաստեր, որոնք ցուցանում են հայոց եկեղեցու առանձնաշնորհ կարգավիճակը և նրա դավանաբանության առավելությունը քրիստոնյա մյուս ազգերի եկեղեցիների նկատմամբ: Եթե հույն վարդապետը ասում է, թե «մենք բազում (մեծաթիվ) ենք, դուք՝ սակավ (փոքրաթիվ), հետևաբար մեր դավանանքը ճշմարիտ է, իսկ հայոցը՝ թյուր», Տարոնացին հակաճառում է, որ նախ՝ առանց սուրբ և ուղղափառ հավատի Աստծո համար ընդունելի չէ ազգի քանակության փաստը, երկրորդ՝ բազմությունն ինքնին առավելություն չէ, ավելին՝ բազմաթիվ են այն իրերը, որոնց սակավը պատվական է բազումից: Օրինակ՝ ոսկին սակավ է, իսկ հողը՝ բազում, մարգարիտը սակավ է, իսկ ավազը՝ անչափ և այլն. «Ահա տեսե՞ր զմինն պատուական քան զբազումսն, և ահա մինն հայք են: Որպէս վարշամակն փրկչին զատուցեալ յայլ կտաւոցն, և ի մի կողմն կացեալ, որ է օրինակ մերոյ ազգիս, զատուցեալ յամենայն ազգաց, կարգօք և կրօնիւք»[10]: Միարարականների դեմ մղված գաղափարական պայքարում Գրիգոր Տաթևացին (1345-1409) նույնպես բերում է նմանաբնույթ բազում փաստարկներ՝ ցույց տալու համար, որ ուղղափառ հավատքից շեղվել են ոչ թե հայերը, որոնք պահպանել են ավանդականը, այլ ուրիշ եկեղեցիներ: Եթե դրա հետևանքով հայոց ե-

[10] **Պողոս Տարօնացի**, Թուղթ ընդդէմ Թէօփիստեայ, Կ. Պոլիս, 1752, էջ 246:

կեղեցու դավանաբանությունը տարբերվում է մյուս եկեղեցիներից, ապա դա բնավ չի նշանակում, թե ճշմարիտ է նրանց՝ «բազումի» դավանաբանությունը: Առհասարակ, շարունակում է Գրիգոր Տաթևացին, շատ առումներով առանձինը կամ լավագույն մեկը պատվական ու գերադասելի է ընդհանուրից կամ բազումից. «Դարձեալ՝ յայտնապէս ասել ո՛չ է հարկ՝ թէ ամենայն բազում պատուական է քան զմին. զի ահա գոյացութիւն մի է և պատահումն բազում. արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: …Եւ զայս վասն է՞ր է յերկարել ինձ, զի ցուցանիցի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետևիլ: Եւ լաւ է մի ակն պատուական՝ քան զբազում քարինս անպիտան»[11]: Պաշտպանելով Տաթևացու տեսակետը և նկատի ունենալով XVIII դարի սկզբների կրոնական ու ազգային-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները՝ կաթողիկոս Ղազար Ա Ջահկեցին (†1751 թ.) գրում է, որ թեև «ազգն երկաբնակաց» պարծենում է իրենց իշխանությամբ՝ ասելով, թե «մե՛ք միայն ունիմք զթագավորութիւն և զհայրապետութիւն. և ամեն ազգ և ազինք պարտին հնազանդիլ մեզ»[12], այնուհանդերձ, թեպետ մենք «զրկեցաք ի մարմնաւոր իշխանութեանց և զրաւեցաք ի փորձութիւնս և ի տառապանս, այլ սակայն ի մեծ և ի գլխաւորական բարիսն երանելի եմք և յոյժ խնդալի: Վասն զի ուղղափառ հաւատոյ լոյս ո՛չ նուազեցաւ: Ի բարի սերմանս ցորենոյն՝ որոմն ապականիչ ո՛չ խառնեցաւ»[13]: Սակայն նմանաբնույթ «արդարացումներն» ունեին առավելապես ինքնապաշտպանական ու ինքնամխիթարական բնույթ: Իսկ նման դեպքերում հնարավոր չէ երազել հոգևոր թռիչքների ու սխրանքների և ինքնության հարացույցում ստեղծագործական փոփոխությունների մասին:

Անշուշտ, կեցության անբարենպաստ պայմաններում վերոնշյալ ավանդապահական ու գաղտնապահական դիրքորոշումները, ինքնամեկուսացումներն ու ինքնատարբերակումները ինքնության կորստի վախի հանդեպ հակազդման հուսալի մեխանիզմներ են: Դրանք նշանակում են ինքնութենական հոգևոր Պատերի ու Պարիսպների կառուցում, որոնք խորհրդանշում են հայոց ազատասիրության ու անկախության, արժանապատիվ կենալու, սեփական քաղաքակրթական, մշակութային և բարոյական արժեհամակարգին հավատարիմ մնալու ձգտումը: Միաժամանակ այդ Պատերը յուրօրինակ սահմանագիծ են «Մենք»-ի և «Նրանք»-ի միջև, որոնք «Նրանք»-ի ագրեսիվության կամ մշտական վտանգի պարագայում վերածվում են ամուր պատնեշի և հուսալի թաքստոցի: Սակայն ինքնամեկուսացումները ունեին (և ունեն) նաև բացասական հետևանքներ: Արմատական ու անտեղի ավան-

[11] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 550:

[12] **Ղազար Ջահկեցի**, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 667:

[13] Նույն տեղում, էջ 669-670:

դապահությունն ինչ-որ իմաստով ճանապարհ է բացում ինքնամեկուսացման համար, որովհետև «այրում» է մրցակից ազգերի, այլ մշակույթների կամ ուրիշ եկեղեցիների հետ փոխշփման ու երկխոսության կամուրջները: Օրինակ՝ V-VII դարերում հայ երիտասարդները կրթություն էին ստանում Ալեքսանդրիայի, Աթենքի, Կ. Պոլսի և բյուզանդական այլ քաղաքների կրթական հաստատություններում ու բարձրագույն դպրոցներում, իսկ հոգևորականությունը ժամանակին ստանում էր անհրաժեշտ կրոնաաստվածաբանական ու իմաստասիրական գրականություն և քաջատեղյակ էր համաքրիստոնեական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին: Սակայն հետագայում դավաբանական տարաձայնությունների պատճառով տնական ինքնամեկուսացումը հայ դպրոցն ու միտքը աստիճանաբար կտրում է իրենց սնուցող արևմտյան ակունքից, լավագույն դեպքում՝ նրանց էր հասնում շատ քիչ գրականություն, որը չէր կարող ոչ միայն տեսական միտքը սնուցել նորագույն գաղափարներով, այլև պատրաստել տեսական գիտելիքներով զինված գրագետների դաս: Պատահական չէ, որ տարբեր ժամանակներում, հատկապես դավանաբանական-գաղափարաբանական պայքարի ընթացքում, երբ բանավիճում էին հայ և կաթոլիկ կամ ուղղափառ հոգևորականները, հայ հոգևորականները պարտվում էին, ամոթահար լինում, որովհետև պարզվում էր, որ բանավիճելու համար չունեն գիտական պատշաճ մակարդակ, ավելին՝ նույնիսկ տարրական պատկերացում չունեին իրենց պատմությանն ու լեզվին վերաբերող հարցերի մասին: Նման «հանդիպումներից» հետո նրանք հասկանում էին, որ, պատմագիր Առաքել Դավրիժեցու դիպուկ արտահայտությամբ, «**զայն, զոր գիտեն, ո՛չ է գիտութիւն**»[14]:

Այլ խոսքով՝ ժամանակի հոլովույթում ինքնության կորստի վախի պայմաններում ինքնատարբերակվել ենք, մեկուսացել արտաքին աշխարհից, մեզ հոգեհարազատ քաղաքակրթական ու մշակութային աշխարհից, **բայց տարբերակվելու նախնական քայլերից ու տեսական թույլ արդարացումներից այն կողմ չենք անցել և չենք մշակել տարբերակվածի ու առանձնացվածի ամբողջական փիլիսոփայություն ու գաղափարախոսություն**: Ինքնամեկուսացման պատճառով դադարելով ճանաչել հակառակորդին կամ Թշնամուն (Թշնամին միշտ հետևում է մեզ, պարզում մեր թույլ և ուժեղ կողմերը, իսկ մենք չենք հետևում Թշնամու դաշտում կատարվող փոփոխություններին, չենք տեսնում նրա կերպարափոխությունները, հետևաբար չենք կանխագուշակում մեզ ուղղ-

[14] **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 316: Հայ և կաթոլիկ հոգևորականների միջև այդպիսի մի բանավեճի պատմության ընթացքի և հետևանքների մասին տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան,** Փիլիսոփայության դերը XVII դարում հայ գիտամշակութային կյանքի վերընթացի կայացման և ազգային ինքնության ամրապնդման ու զարգացման գործում / «Հայ փիլիսոփայությունը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում», ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 61-64:

ված հարվածների բնույթը, տեղն ու ժամանակը) և արտաքին աշխարհից չստանալով անհրաժեշտ հոգևոր նոր լիցքեր ու գաղափարներ՝ թվում է, թե հայերն իրենց ուշադրությունը պիտի բևեռեին իրենց ներքին կարողությունների ու ուժերի համախմբման, առկա հնարավորությունների իրականացման և ըստ էության ազգային արժեքների վերաարժարժման ու օգտագործման վրա: Առանձնացման դիրքորոշման համատեքստում **ինքնության Պատերի ու Պարիսպների կառուցումը ենթադրում է մտածելակերպի ու գործելակերպի փոփոխություն, սեփական կյանքի կազմակերպման հիմքերի ու սկզբունքների՝ հզորանալու քաղաքական տեսլականի, ազգային կրթության ու դաստիարակության համակարգի, մշակութային արժեքների պահպանման ձևերի մշակում:** Սակայն ինքնատարբերակվելով ու առանձնանալով արտաքին աշխարհից, ապրելով Պարիսպների ներսում՝ մենք դարձյալ առաջնորդվում ենք ավանդական գոյատևման (անհատապաշտական/անձնապաշտական) կենսափիլիսոփայությամբ՝ առանց հաշվի առնելու արտակարգ պայմանները, առանց հզորացմանը միտված ստեղծագործական ճիգերի, **առանց ստեղծելու ոչ թե գոյատևման, այլ զարգացում ապահովող նյութական ու հոգևոր հզոր կառույցներ**:

Ամփոփենք: Ազգային ինքնության կորստի վախի հակադարձման կրավորական ձևերը՝ ավանդապահությունը, գաղտնապահությունը և առանձնացում-մեկուսացումը ինքնության պահպանման հուսալի մեխանիզմներ են, սակայն տևական ժամանակ ինքնությունը միայն դրանցով պահպանելու ռազմավարությունը դրականի հետ ունեցել է և ունի բացասական հետևանքներ: **Նախ**, ավանդապաշտությունը, հատկապես դրա արմատական թևը, մերժում է նորամուծությունները, իսկ ավանդապաշտները դժկամությամբ են համաձայնվում կատարել փոփոխություններ, և դրանով իսկ խոչընդոտում են ինքնության հարստացման ու արդիականացման գործընթացը: Ինքնությունը նույնականացումների արդյունք է, ուստի որքան բազմազան լինեն դրանք, այնքան բազմագույն ու բազմաշերտ կլինի ինքնության պատկերը: **Երկրորդ**, ավանդապաշտությամբ երբեմն ավելի շուտ արդարացնում ենք մեր կրավորականությունն ու անգործությունը, քան ցույց տալիս ստեղծագործելու և հզորանալու մեր վճռականությունը: **Երրորդ**, ինքնատարբերակվելով ու առանձնանալով արտաքին աշխարհից՝ մենք հաճախ առաջնորդվել ենք առավելապես գոյատևման կենսափիլիսոփայությամբ և տարբերակվելու նախնական քայլերից այն կողմ չենք անցել, չենք մշակել տարբերակվածի ու առանձնացվածի գաղափարախոսություն և գործելակերպ: **Չորրորդ**, եթե ավանդական հասարակության մեջ ավանդապահությունն արդարացված էր, ապա բոլոր արժեքները հարաբերականացնող արդի աշխարհում զարգանալու ու հզորանալու և ժամանակի ոգուն համահունչ գործելու ստուգված ճանապարհը ավանդույթի վերաարժևորման, ավանդականի և նորարա-

ական, սեփական ու օտարի խելամիտ ու ինքնատիպ համադրումն է, ավանդական վրա հիմնված ինքնության քաղաքակրթական նոր շերտի կառուցումը: Ավանդական արժեքներն այն հիմնաքարերն են, որոնց վրա պետք է կառուցվի արդիականության ոգին մարմնավորող և ժամանակի արագ փոփոխվող պահանջներին համապատասխանող ազգային ինքնության նոր հարացույցը:

СЕЙРАН ЗАКАРЯН – ***Страхи потери национальной идентичности и формы их противодействия.*** – В статье выдвигается мысль о том, что среди армян долгое время, в особенности по причине продолжительных неблагоприятных условий существования и потери государственности, акцент делался не на обновление и обогащение созданной идентичности, а, главным образом, на ее сохранение. В основе подобной позиции заложены страхи потери элементов идентичности, наиболее активными формами противодействия которых являются вооруженная и освободительная борьба, а пассивными – традиционализм, консервативность, скрытность и обособление–изолированность. В статье рассматриваются пассивные формы противодействия, в основе которых лежит убежденность, что ни в коем случае и ни при каких условиях нельзя отказываться от опор национальной идентичности и «завещанного» – родины, нации, религии и веры, языка, культуры, исторического прошлого и так далее. Пассивные формы являлись наиболее надежными способами сохранения национальной идентичности особенно в средневековье, когда повсеместно доминировал традиционный образ мыслей, и нация отождествлялась с религией и верой. Однако стратегия сохранения идентичности продолжительное время только за счет этих факторов наряду с положительными последствиями имела (и имеет) последствия отрицательные (которые, например, проявлялись в конфессиональной борьбе). Во-первых, традиционализм, особенно его радикальная ветвь, отвергает нововведения, тем самым препятствуя изменению и обновлению парадигмы идентичности. Во-вторых, позиция изоляции предполагает изменение образа мыслей и действий, развитие и сохранение программы основ и принципов организации собственной жизни: политическое видение становления сильного государства, системы национального образования и воспитания, программу сохранения и развития культурных ценностей. Однако, обособившись от внешнего мира, армяне, главным образом, руководствовались традиционным мировоззрением существования и не разработали целостную жизненную философию и идеологию обособленного. Проверенный же путь развития, становления и действия в духе времени есть путь синтеза традиционного и инновационного, есть разумное и своеобразное сопоставление собственного и чужого, построение нового цивилизационного слоя идентичности на основе традиционного.

Ключевые слова: *национальная идентичность, страх, консерватизм, традиционность, конспиративность, самоизоляция, историческая память, идентичность в средние века, политика идентичности*

SEYRAN ZAKARYAN – ***The Fears of Losing the National Identity and the Ways of Counteracting Them***. – The following idea is put forward in the article that for a long time among the Armenians the stress was mainly laid not on the modernization and enrichment of national identity but mainly on its protection for different reasons especially because of being deprived of the state and invariability of unfavourable conditions. At the core of this position lay the fears of losing identical elements, the active ways of counteraction of which are the armed struggle and freedom fight, and the passive ways are traditionalism, secrecy, separation-isolation and removal. The article discusses the passive ways of counteraction at the core of which lays the position that the supporting columns of the national identity, i.e. homeland, nation, religion and faith,

language, culture, historical past, etc., and what was bequeathed us should not be refused in any case and in any condition. The passive ways were reliable mechanisms of protecting the national identity especially in the Middle Ages, when the traditional way of thinking was prevailing and nationality was identical to the religion and faith. But for a long time the strategy of keeping the identity only due to those things had (and has) its negative effects besides positive ones (for example, in the Middle Ages they were manifested in religious struggles). First of all traditionalism, especially its radical wing, denies innovations thus preventing the modernization and modification of identical paradigm. Secondly, the position of isolation supposes a change of the way of thinking and acting, a program of principles and bases of its own life organization, i. e. the political vision of becoming powerful, the system of national education, protection and development of national values. Though separating themselves from the outer world, the Armenians mostly were led by the philosophy of traditional existence and did not develop a biophilosophy and ideology of the separated. And the proved way of developing and becoming powerful and acting according to the spirit of time is the sensible and original combination of the traditional and the modern, the native and the alien, the construction of a new layer of civilization based on the tradition.

Key words: *national identity, fear, conservatism, traditionalism, secrecy, self-isolation, historical memory, the identity in the Medieval Ages, the policy of identity*